IIA Armenia	**Իրազեկման, ակադեմիական կապերի և բովանդակության կոմիտեի աշխատակարգ**	Խմբագրություն 1 Ուժի մեջ է 01.03.2024թ.-ից

Նպատակը

Իրազեկման, ակադեմիական կապերի և բովանդակության կոմիտեի (այսուհետ Կոմիտե) նպատակն է շարունակաբար ամրապնդել ներքին աուդիտի մասնագիտության դերն ու կարևորությունը աուդիտի մասնագետների և մասնագիտության հիմնական շահառուների շրջանում՝ կիրառելով իրազեկման, վստահելի հարաբերությունների ձևավորման և փոխհամագործակցության լայն գործիքակազմ:

Պարտականությունները

Կոմիտեի հիմնական պարտականություններն են՝

1. Իրականացնել իրազեկման աշխատանքներ՝ հիմնական շահառուների շարունակական ներգրավվածությամբ (կենտրոնական բանկ, կառավարություն, բորսա հանրային շահեր ունեցող և այլ ընկերությունների կառավարման մարմիններ/աուդիտորներ), ինչպես նաև բովանդակության մշակման միջոցով,
2. Աջակցել ուսանողների շրջանում ներքին աուդիտի մասնագիտության առաջմղմանը՝ իրազեկման, ներգրավման և կրթման միջոցով,
3. Ստեղծել հայերեն լեզվով մասնագիտական բովանդակություն՝ այդ թվում ստանդարտների, մասնագիտական նյութերի, ինչպես նաև գրքերի թարգմանությունների միջոցով,
4. Մշակել և տարածել աուդիտի մասնագիտությանն առնչվող տեսանյութեր, վիդեոներ, պոդքասթներ, մասնագիտությանն առնչվող և լավագույն փորձը տարածող այլ թվային նյութեր,
5. Աջակցել ՆԱԻ Հայաստանի Խորհրդի և այլ կոմիտեների աշխատանքներին:

Կազմը

Կոմիտեի ընթացիկ կազմը ներկայացված է Հավելված 1-ում:

Կոմիտեի կազմը հաստատում է ՆԱԻ-Հայաստանի Խորհուրդը: Կոմիտեին կարող են անդամակցել ինչպես տվյալ ոլորտում հետաքրքվածություն ունեցող Խորհրդի անդամները, այնպես էլ ՆԱԻ-Հայաստանի այլ անդամներ: Կոմիտեի անդամների քանակի սահմանափակում և նվազագույն պահանջ սահմանված չէ: Կոմիտեի աշխատանքները կազմակերպում, կոորդինացնում և վերահսկում է Կոմիտեի նախագահը, ում նշանակում է Կոմիտեն՝ իր կազմում ներառված Խորհրդի անդամներից:

Կոմիտեի հանդիպումներին և/կամ ընթացիկ աշխատանքներին կարող են մասնակցել նաև ՆԱԻ-Հայաստանի այլ անդամներ և ոչ անդամներ՝ որպես հրավիրյալներ:

Հանդիպումները

Կոմիտեն հանդիպում է կանոնավոր կերպով՝ նվազագույնը եռամսյակը մեկ անգամ, կամ ըստ անհրաժեշտության ավելի հաճախ (այդ թվում նաև՝ հեռակա կարգով)՝ նպատակ ունենալով իրականացնել իր առաջ դրած խնդիրները: Կոմիտեն սահմանում է իրազեկման աշխատանքների պլանը և իրականացվելիք նախագծերը: Բյուջե պահանջող նախագծերը համաձայնեցվում են Խորհրդի հետ:

Որոշումները

Կոմիտեի որոշումները իրավազոր են, եթե ներկա են (հեռակա նիստերի դեպքում՝ հարցմանը մասնակցել են) Կոմիտեի անդամների մեծամասնությունը: Որոշումները ընդունվում են միաձայն կարգով՝ նիստին ներկա գտնվող (հեռակա նիստերի դեպքում՝ հարցմանը մասնակցած) Կոմիտեի անդամների կողմից:

Յուրաքանչյուր Կոմիտեից հետո հնգօրյա ժամկետում Կոմիտեի նախագահը կազմում է Կոմիտեի որոշումների արձանագրություն, որը շրջանառվում և հնգօրյա ժամկետում համաձայնեցվում է Կոմիտեի նիստին ներկա անդամների, ինչպես նաև պատասխանատու կատարողների հետ: Յուրաքանչյուր հաջորդ Կոմիտեի ընթացքում Կոմիտեի նախագահը Կոմիտեի քննարկմանն է ներկայացնում նախորդ կոմիտեների հանձնառությունների կատարողականը:

Հավելված 1. Իրազեկման, ակադեմիական կապերի և բովանդակության կոմիտեի կազմը

Իրազեկման, ակադեմիական կապերի և բովանդակության **կոմիտեի կազմը** հետևյալն է.

Կոմիտեի նախագահ՝ Արա Չալաբյան

Կոմիտեի անդամներ՝ Անգելինա Մնացականյան

Ազատ Գաբրիելյան

Կիմ Ավանեսյան

Գագիկ Գրիգորյան

Արտակ Բաղդասարյան